Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2021 թվականի օգոստոսի 18

թիվ 1 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ ՈԱԲ 2020-2021 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման մասին։
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/
2. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին։
   /Զեկուցողներ՝ ֆակուլտետային պատասխանատուներ/
3. ԳՊՀ ՈԱԲ հաշվետվության և 2021-2021 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների քննարկում և ներկայացում։
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/
4. Ընթացիկ հարցեր։

1. **Լսեցին-** ՈԱԲ 2020-2021 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման մասին։

   //Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/

Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյանը ներկայացրեց ՈԱԲ 2020-2021 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման հետ կապված աշխատանքները:

2. **Լսեցին-** ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին։

Ֆակուլտետային պատասխանատուները ներկայացրին ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքները՝ անդրադառնալով այն տիրույթներին, որոնք համալրման կարիք ունեն կամ հասանելի չեն ուսանողներին։

3. **Լսեցին-** ՈԱԲ հաշվետվության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացման հարցը։

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/

Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյանը ներկայացրեց ՈԱԲ հաշվետվությունը, իրականացրած հարցումների վերլուծությունների արդյունքները, անդրադարձ կատարվեց 2021-2021 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին, իրականացված և պլանավորված աշխատանքներին:

Ընթացիկ հարցերից քննարկվեց 2020-2021 ուսումնական տարում որակի ապահովման գործընթացում ներքին շահառուների և արտաքին շահակիցների ներգրավվածության հարցը:

Որոշեցին.

1. ԳՊՀ ՈԱԲ 2020-2021 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկումը, հաշվետվությունը և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները ներկայացնել ռեկտորատի նիստին:
2. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքներն ուղարկել դասախոսներին, որպեսզի մինչև առկա ուսուցման դասերի մեկնարկը բացակայող դասընթացների տիրույթները համալրվեն և թարմացվեն:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2021 թվականի սեպտեմբերի 5

թիվ 2 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին։
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյան/
2. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների՝ 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների մշտադիտարկման և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգերի, գործողությունների պլանների հավաքագրման գործընթացի մասին։
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/
3. Ներքին շահակիցների՝ ուսանողների կարիքների վերհանման մասին։

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/։

1. **Լսեցին** - Ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին։

Ներկայացվեց ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը, կարևորվեց շրջանավարտների կողմից ներկայացված նկատառումները և առաջարկությունները։

2. **Լսեցին** - Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների՝ 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքների մշտադիտարկման և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգերի, գործողությունների պլանների հավաքագրման գործընթացի մասին։

Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյանը ներկայացրեց ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների՝ 2020-2021 ուստարում կատարած աշխատանքների մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև 2021-2022 ուստարվա զարգացման

հայեցակարգերի, գործողությունների պլանների հավաքագրման հետ կապված աշխատանքները։

3. **Լսեցին -** Ներքին շահառուների՝ ուսանողների, կարիքների վերհանման մասին։

Ն. Մուրադյանը ներկայացրեց ներքին շահառուների՝ ուսանողների կարիքների վերհանման, բավարարվածության գնահատման հարցաթերթը, կարևորվեցին հարցաշարերում առկա բաց և փակ հարցերը՝ որպես կարևոր գործոն որակական տվյալներ հավաքագրելու և դրանք հետագայում վերլուծելու համար։

Որոշեցին.

1. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացնել ռեկտորատի, այնուհետև գիտխորհրդի նիստերի քննարկմանը։
2. ԳՊՀ ուսանողների կարիքների վերհանման հարցաթերթը դնել գործողության մեջ՝ կատարելով համապատասխան հարցում ուսանողների շրջանում։

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2021 թվականի հոկտեմբերի 14

թիվ 3 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առցանց դասերի անցկացման գործընթացից ԳՊՀ դասախոսների և առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթերի վերանայման աշխատանքների մասին:
   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/
2. Վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման հարցաթերթի վերանայման մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարրա Հայրապետյան/

3. ԳՊՀ-դպրոցներ համագործակցության մասին:
   /Զեկուցող՝ Որակի բաժնի մասնագետ Մ. Նախրատյան/

1. **Լսեցին** - Առցանց դասերի անցկացման գործընթացից ԳՊՀ դասախոսների և առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթերի վերանայման աշխատանքների մասին:

Ներկայացվեց առցանց դասերի անցկացման գործընթացից ԳՊՀ դասախոսների և առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթիկները, նշվեցին կատարված փոփոխությունները, առանձնացվեցին որակական և քանակական հարցերը:

2. **Լսեցին** - Վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման հարցաթերթի վերանայման մասին:

Զեկուցողը, կարևորելով ԳՊՀ աշխատակիցների դերը որակի ներքին ապահովման գործընթացում, ներկայացրեց վարչական և ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման հարցաթերթի վերանայման հետ կապված աշխատանքները:

3. **Լսեցին –** Դպրոց-բուհ համագործակցության մասին:

Մ. Նախրատյանը կարևորեց ուսանողների դերը ԳՊՀ-դպրոցներ համագործակցության շրջանակներում, անդրադարձավ համագործակցության առցանց ձևաչափին:

Արտահայտվեցին-Նիստին մասնակցող ուսանողներն առաջարկեցին ԳՊՀ-դպրոցներ համագործակցության ծրագրի շրջանակներում վերսկսել մասնագիտական կողմնորոշման դասընթացները, առարկայական օլիմպիադաները:

Որոշեցին.

1. Առցանց դասերի անցկացման գործընթացից ԳՊՀ դասախոսների և առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության և վարչական ու ուսումնաօժանդակ կազմի բավարարվածության գնահատման վերանայված հարցաթերթերը դնել գործողության մեջ և կատարել համապատասխան հարցումներ:
2. Ուսանողների՝ ԳՊՀ-դպրոց կապերն ակտիվացնելուն ուղղված առաջարկությունները ներկայացնել ռեկտորատի քննարկմանը, կիրառել համագործակցության նոր կառուցակարգեր, շարունակել զուգակցված՝ առցանց և անցանց եղանակներով աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2021 թվականի հոկտեմբերի 27

թիվ 4 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթի մասին։

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/։

2. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ մասին։

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Նոնա Մուրադյան/։

1. **Լսեցին**–Նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթի մասին։

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/։

Զեկուցողը կարևորեց ԳՊՀ-ում նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման գործընթացը, շրջանավարտների նկատառումներն ու առաջարկություններն այդ գործընթացը բարելավելու ուղղությամբ։

2. **Լսեցին** –Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ մասին։

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Նոնա Մուրադյան/։

Զեկուցողը, կարևորելով բուհում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրումը, ներկայացրեց հարցաթերթն՝ ըստ հարցերի հերթականության։

Արտահայտվեցին-Նիստին մասնակից Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչն ու աշխատակիցներն առաջարկեցին հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման

արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթում ավելացնել ստորև նշված հարցերը, որպեսզի հնարավորություն ստեղծվի ուսումնասիրել նաև ամբիոնների և դասախոսական կազմի ներգրավածության աստիճանն այս գործընթացում։

1. Ամբիոնը խրախուսո՞ւմ է Ձեզ զբաղվել հետազոտությամբ և մասնակցել ուսանողական գիտաժողովներին։
2. Նշել այն դասախոսին (երին), ովքեր խրախուսում են Ձեր գիտահետազոտական գործունեությունը։

Որոշեցին.

1. Հաստատել նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթը և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը։
1. Հաստատել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթը և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը։

ՈՒԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**